Գյումրու, Վանաձորի ավագանիների 2016 թվականի հոկտեմբերի 2-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
1	Հավատարմագրվելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ***	2011թ. ԸՕ 31, մաս 2	23.07.2016-ից մինչև 22.09.2016	ԿԸՀ
2	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունները և հեռուստաընկերությունները (անկախ սեփականության ձևից) իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը հրապարակում են. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո***	20, մաս 5, պարբ. 2	մինչև 1.08.2016	Հեռուստառադիո ընկերություններ
3	Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանքը՝ ըստ համայնքների, Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 3 օր հետո***	12, մաս 2, պարբ. 2	26.07.2016-ին	Լիազոր մարմին
4	Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո***	19, մաս 3	մինչև 11.08.2016	Մարզպետներ
5	Ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	127, մաս 4	18.08.2016 - 28.08.2016 մինչև ժամը 18:00	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
6	Ընտրական տեղամասերը կազմավորվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ***	16, մաս 1	մինչև 18.08.2016	Լիազոր մարմին, մասնակցությամբ համայնքի ղեկավարի և ԸԸՀ անդամի

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
7	Տեղամասային կենտրոնները սահմանվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ***	18, մաս 1	մինչև 20.08.2016	Գյումրու, Վանաձորի քաղաքապետեր
8	Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***սահմանվելուց հետո՝ 2-օրյա ժամկետում***	52, մաս 1, կետ 3	մինչև 22.08.2016	ԸԸՀ
9	Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ***	12, մաս 1	մինչև 23.08.2016	Լիազոր մարմին
10	Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ***	13, մաս 3	մինչև 23.08.2016	Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող
11	Ընտրողների ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի, լիազոր մարմնի համացանցային կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվում են. ***քվեարկության օրվանից 40 օր առաջ***	13, մաս 2	23.08.2016-ին	Լիազոր մարմին
12	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35, և ոչ ուշ, քան 30 օր առաջ***	127, մաս 5	28.08.2016 - 2.09.2016	ԸԸՀ
13	Քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշումն ընդունվում է. ***նախընտրական քարոզչությունն սկսելուց 10 օր առաջ***	21, մաս 3	մինչև 30.08.2016	Գյումրու քաղաքապետ Վանաձորի քաղաքապետ
14	Քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշումը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***որոշումն ընդունելուց հետո՝ 3-օրյա ժամկետում***	21, մաս 4	մինչև 2.09.2016	Գյումրու քաղաքապետ Վանաձորի քաղաքապետ
15	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումը՝ ըստ ընտրական տեղամասերի կատարվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ***	44, մաս 5, պարբ. 4 ԿԸՀ որոշում 30.06.11թ. N 14-Ն	մինչև 2.09.2016	ԿԸՀ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
16	Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	44, մաս 6, պարբ. 1	2.09.2016 - 7.09.2016 մինչև ժամը 18:00	Աժ խմբակցություն ունեցող կուսակցու-թյուններ (կուսակցու-թյունների դաշինք), ԸԸՀ
17	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակվում են. ***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում***	131, մաս 2 պարբ. 2	մինչև 5.09.2016	ԿԸՀ
18	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տեղեկանք կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է. ***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրը մեկ***	26, մաս 7	5.09.2016 -ից սկսած երեք աշխատանքային օրը մեկ	Համապատասխան առևտրային բանկ
19	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների) գույքի և եկամուտների մասին հայտարարագիր կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում***	8, մաս 5, պարբ. 2	մինչև 7.09.2016	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
20	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում***	8, մաս 5, պարբ. 1	մինչև 7.09.2016	Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներ
21	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է. ***ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը, ավարտվում՝ քվեարկության օրվանից մեկ օր առաջ***	19, մաս 1, պարբ. 3	9.09.2016 - 30.09.2016 մինչև ժամը 24:00	Ընտրողներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
22	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից նախընտրական ծրագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. ***ներկայացվելուց հետո՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, բայց ոչ շուտ, քան նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը***	8, մաս 4 ԿԸՀ որոշում 29.07.11թ. N 42-Ն	26.08.2016-ից ներկայացվելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը	ԿԸՀ
23	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների) գույքի և եկամուտների մասին հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. ***հայտարարագիրը ներկայացվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում***	8, մաս 6	մինչև 10.09.2016	ԿԸՀ
24	Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է. ***կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին***	44, մաս 7	10.09.2016 ժամը 12:00-ին	ԸԸՀ
25	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը***	28, մաս 1	18.09.2016-ին	Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
26	Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. ***հայտարարագրերը ներկայացվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում.***	28, մաս 4	մինչև 21.09.2016-ը, 1.10.2016-ը և 9.10.2016	ԿԸՀ
27	Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ***	14, մաս 1	մինչև 22.09.2016	Ընտրողներ, Լիազոր մարմին
28	Ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու ինքնաբացարկի մասին դիմում կարող են ներկայացնել. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	137, մաս 2	մինչև 22.09.2016 մինչև ժամը 18:00	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք, ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
29	Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ ընտրական տեղամասերի և համայնքների, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	12, մաս 2	22.09.2016-ին	Լիազոր մարմին
30	Քվեաթերթիկների տպագրման համար ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ համայնքների և ընտրական տեղամասերի Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	59, մաս 5	22.09.2016-ին	Լիազոր մարմին
31	Քվեաթերթիկի նմուշը սահմանվում է. ***քվեարկության օրվանից առաջ 10-րդ օրը***	52, մաս 1 կետ 2	22.09.2016-ին	ԸԸՀ
32	Քվեաթերթիկները տպագրվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	59, մաս 5, պարբ. 1	22.09.2016 - 29.09.2016	ԿԸՀ
33	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ անդամն այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին կարող են ներկայացնել. ***մինչև քվեարկության օրվան նախորդող 5-րդ օրվա ժամը 18.00-ն***	45, մաս 6 կետ 3	մինչև 27.09.2016 մինչև ժամը 18.00	ՏԸՀ նախագահ, քարտուղար, անդամ
34	Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ ընտրական տեղամասերի և համայնքների, տարածքային ընտրական հանձնաժողովին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից 5 օր առաջ***	12, մաս 2	27.09.2016-ին	Լիազոր մարմին
35	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները, դրոշմակնիքները և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին հանձնվում են. ***քվեարկությունից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	2011թ. ԸՕ 58, մաս 3	27.09.2016 - 29.09.2016	ԿԸՀ
36	Ընտրողներին քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, քվեարկության տեղի և ժամանակի մասին ծանուցագիր ուղարկվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ***	13, մաս 6	մինչև 28.09.2016	Լիազոր մարմին
37	Ընտրողների ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի, լիազոր մարմնի համացանցային կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվում են. ***քվեարկության օրվանից 4 օր առաջ***	13, մաս 2	28.09.2016-ին	Լիազոր մարմին

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
38	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 20-րդ օրը***	28, մաս 1	28.09.2016-ին	Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
39	Տեղամասային կենտրոնում փակցվող և տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից գործածվող ընտրողների ցուցակները՝ կազմված մատյանի ձևով՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները, ինչպես նաև քվեարկության օրն ընտրական տեղամասում ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են. ***քվեարկության օրվանից 3 օր առաջ***	12, մաս 3	29.09.2016-ին	Լիազոր մարմին
40	Ընտրողների ցուցակի օրինակը տեղամասային կենտրոնում բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ*** ***(Այս ցուցակները տեղամասային կենտրոնում մնում են փակցված մինչև քվեարկությանը հաջորդող 7-րդ օրը)***	13, մաս 4	30.09.2016-ին	ՏԸՀ նախագահ
41	Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է. ***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն***	57, մաս 3	մինչև 1.10.2016 մինչև ժամը 24:00	Համայնքի ղեկավար, ՏԸՀ նախագահ
42	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, փաթեթավորված կնիքը, դրոշմակնիքը, հանձնաժողովի անդամների անհատական կնիքները հանձնվում են. ***քվեարկության նախորդ օրը***	2011թ.ԸՕ 57, մաս 7, մաս 10 58, մաս 4,	1.10.2016-ին	ԸԸՀ
43	Տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները, ընտրողների ցուցակների էջերը ստորագրվում են. ***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24:00-ն***	2011թ. ԸՕ 59, մաս 7	1.10.2016 մինչև ժամը 24:00	ՏԸՀ
44	Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կապված բոլոր գործառնությունները դադարեցվում են. ***քվեարկության օրվանից*** ***գործառնությունների կատարման վերջնաժամկետն է 2016թ.սեպտեմբերի 17-ը ներառյալ***	27, մաս 7	2.10.2016 ժամը 00:00-ից	Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ, համապատասխան առևտրային բանկ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
45	Ընտրողն իրեն ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին դիմում լիազոր մարմնին կարող է ներկայացնել. ***մինչև քվեարկության ավարտը***	14, մաս 2	2.10.2016 մինչև ժամը 20.00	Ընտրողներ, Լիազոր մարմին
46	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն սկսվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին***	2011թ. ԸՕ 62, մաս 1	2.10.2016 ժամը 07.00-ին	ՏԸՀ
47	Քվեարկությունը սկսվում է. ***քվեարկության օրը ժամը՝ 08:00-ից***	2011թ. ԸՕ 54, մաս 1 63, մաս 1	**2.10.2016 ժամը 08.00-ին**	ՏԸՀ
48	Քվեարկությունն ավարտվում է. ***քվեարկության օրը ժամը՝ 20:00-ն***	2011թ. ԸՕ 67, մաս 1	2.10.2016 ժամը 20:00-ին	ՏԸՀ
49	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփվում են և քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է. ***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո***	2011թ. ԸՕ 71, մաս 5	3.10.2016 մինչև ժամը 06:00	ՏԸՀ նախագահ
50	Ընտրական փաստաթղթերի պարկը, չսահմանված նմուշի քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը և դրոշմակնիքը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 12 ժամվա ընթացքում***	2011թ. ԸՕ 71, մաս 9 ԿԸՀ որոշում 30.06.11թ. թիվ 21-Ն	3.10.2016 մինչև ժամը 08:00	ՏԸՀ նախագահ և քարտուղար
51	Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների հիման վրա տվյալների մուտքագրումը համակարգիչ ավարտվում է. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում***	2011թ. 73, մաս 2 ԿԸՀ որոշում 29.07.11թ. թիվ 45-Ն	3.10.2016 մինչև ժամը 14:00	ԸԸՀ
52	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումներն ընդունվում են. ***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն***	2011թ. ԸՕ 48, մաս 1, պարբ. 2	3.10.2016 ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն	ԸԸՀ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
53	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները, դրոշմակնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության ավարտից 24 ժամ հետո***	2011թ. ԸՕ 58, մաս 5, 7 ԿԸՀ որոշում 29.07.11թ. N 41-Ն	3.10.2016 մինչև ժամը 20:00-ն	ԸԸՀ
54	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վերահաշվարկի աշխատանքներն սկսվում են. ***վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից և դադարեցվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, ժամը՝ 14.00-ին***	2011թ. ԸՕ 48, մաս 6	4.10.2016 ժամը 09:00 - 7.10.2016 ժամը 14:00	ԸԸՀ
55	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***ընտրության արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ***	28, մաս 1, պարբ. 1	մինչև 6.10.2016	Կուսակցություններ, Կուսակցությունների դաշինքներ
56	Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում, ընտրության արդյունքներն ամփոփվում և ընտրության արդյունքների վերաբերյալ որոշումն ընդունվում է. ***քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը***	2011թ. ԸՕ 75, մաս 2, 165, մաս 2	9.10.2016-ին	ԸԸՀ